

Հ ա շ վ ե տ վ ու թ յ ու ն

ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ՖՎ տեսչության 2012թ. կատարած աշխատանքների մասին

Նախարարության ֆինանսական վերահսկողության տեսչության կողմից 2012թ. լրիվ կամ մասնակի ստուգումներ է իրականացվել հանրապետության տարածքում գործող 91 իրավաբանական անձանց՝ տնտեսվարող սուբյեկտների և բյուջետային հիմնարկությունների մոտ, այդ թվում՝ 19 բյուջետային հիմնարկներում, 41 պետական ոչ առևտրային կազմակերպություններում, 15 հիսուն տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում, 3 ոչ պետական ձեռնարկությունում, 8 հասարակական կազմակերպություններում, 2 քաղաքային և 3 գյուղական համայնքներում:

Ստուգումների արդյունքներով հայտնաբերվել և լրացուցիչ հաշվարկվել է 73769.8 հազ.դրամի անօրեն ծախսումներ, ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պակասորդներ և ավելցուկներ, այդ թվում՝

- անօրինական դուրս գրումներ, վճարումներ և ծախսեր՝ 2683.2 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 2276.4 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 305.8 հազ.դրամ, ենթակա է հաշվառումով վերաձևակերպման՝ 101.0 հազ.դրամ,
- փաստաթղթերով չհիմնավորված ծախսեր՝ 1222.4 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 868.2 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 294.2 հազ.դրամ, ենթակա է հաշվառումով վերաձևակերպման՝ 60.0 հազ.դրամ,
- նախահաշիվներով ավելի նախատեսված գումարներ՝ 5135.0 հազ.դրամ, որը ենթակա է վերականգնման բյուջե,
- ոչ նպատակային, անարդյունավետ ծախսեր՝ 373.7 հազ.դրամ, որը ենթակա է վերականգնման բյուջե,
- աշխատանքների և ծառայությունների հավելագրումներ՝ 18282.9 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 17799.4 հազ.դրամ, ենթակա է հաշվառումով վերաձևակերպման՝ 483.5 հազ.դրամ,
- նորմերի խախտումներ՝ 42096.8 հազ.դրամ, որը ենթակա է վերականգնման բյուջե,
- գերածախս՝ 255.4 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 192.4 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 63.0 հազ.դրամ,
- այլ խախտումներով արձանագրված գումարներ՝ 1805.0 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 264.6 հազ.դրամ, ենթակա է հաշվառումով վերաձևակերպման՝ 1540.4 հազ.դրամ,

- ավելցուկ՝ 1042.5 հազ.դրամ,
- պակասորդ՝ 872.9 հազ.դրամ:

Նշված գումարներից պետական բյուջե լրացուցիչ հաշվարկված գումարները կազմել են 63372.4 հազ.դրամ, համայնքային բյուջե հաշվարկված գումարները կազմել են՝ 5634.1 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին վերականգնման ենթակա գումարները՝ 663.0 հազ.դրամ, հաշվառումով վերաձևակերպման ենթակա գումարները՝ 2184.9 հազ.դրամ:

Ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պակասորդները 5 պետական ոչ առևտրային կազմակերպությունում կազմել են 872.9 հազ.դրամ:

Ավելցուկը կազմել է 1042.5 հազ.դրամ, որից՝ 8 պետական ոչ առևտրային կազմակերպությունում 281.2 հազ.դրամ և 1 հիսուն տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունում 761.3 հազ.դրամ:

Լրացուցիչ հաշվարկված 73769.8 հազ.դրամի անօրինական ծախսերից, ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պակասորդներից ու ավելցուկներից վերականգնվել/վերաձևակերպվել է 22373.9 հազ.դրամ, որից՝ պետական բյուջե՝ 17280.1 հազ.դրամ, համայնքային բյուջե՝ 535.9 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 482.0 հազ.դրամ, հաշվառումով վերաձևակերպման ենթակա 4075.9 հազ.դրամ:

Ապառքի գումարները կազմում են 51395.9 հազ.դրամ, որից՝ պետական բյուջեին՝ 46092.3 հազ.դրամ, համայնքային բյուջեին՝ 5098.2 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 181.0 հազ.դրամ, հաշվառումով վերաձևակերպման ենթակա 24.4 հազ.դրամ:

Պետական բյուջե չվերականգնված գումարները հիմնականում ԼՂՀ ԿԱ զբոսաշրջության վարչության և Ստեփանակերտի քաղաքապետարանի ստուգմամբ հայտնաբերված գումարների ապառքներն են:

Նախորդ՝ 2011թ. կատարված ստուգումների արդյունքներով լրացուցիչ հաշվարկված գումարների գծով ապառքներից 2012թ. վերականգնվել /վերաձևակերպվել է 11769.9 հազ.դրամ, որից պետական բյուջե՝ 1933.2 հազ.դրամ, համայնքային բյուջե՝ 575.0 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 760.0 հազ.դրամ, հաշվառումով վերաձևակերպվել է 8501.7 հազ.դրամ:

Ընդամենը 2012թ. պետական բյուջե է վերականգնվել 19213.3 հազ.դրամ, որից 2012թ. արդյունքներով 17280.1 հազ.դրամ, 2011թ. ապառքի գումարներից 1933.2 հազ.դրամ: Համայնքային բյուջե է վերականգնվել 1110.9 հազ.դրամ, որից 2012թ. արդյունքներով 535.9 հազ.դրամ, 2011թ. ապառքի գումարներից 575.0 հազ.դրամ: Ձեռնարկության հաշվին է վերականգնվել 1242.0 հազ.դրամ, որից 2012թ. արդյունքներով 482.0 հազ.դրամ, 2011թ. ապառքի գումարներից 760.0 հազ.դրամ: Հաշվառումով վերաձևակերպված գումարները կազմել են 12577.6 հազ.դրամ, որից 2012թ. արդյունքներով 4075.9 հազ.դրամ, 2011թ. ապառքներից 8501.7 հազ.դրամ:

Ստուգման արդյունքներով յոթ հիմնարկ-ձեռնարկության նյութերը ներկայացվել են ԼՂՀ ԿԱ ոստիկանություն: